ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽՈՒԳԵՅԱՆ ԱՐԵՎԻԿ ՎԱՐԴԱՆԻ

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Ս.Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. ապրիլի 14-ին ժամը 12.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մարտի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ա. Հ. Սվաջյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Երեխայի խոսքի զարգացումը նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի շնորհիվ է տեղի ունենում նախադպրոցականի հոգեկան զարգացումը, սոցիալականցումը, ձևավորվում է նրա ներաշխարհը: Նախադպրոցական տարիքում խոսքի զարգացման խնդիրներից առանձնահատուկ կարևորվում են կապակցված խոսքի ձևավորումն ու զարգացումը, քանի որ կապակցված խոսքի միջոցով է իրականացվում լեզվի և խոսքի հիմնական՝ հաղորդակցման գործառույթը: Կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է, այն որոշում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը:

Բանավոր կապակցված խոսքի տիրապետումը նպաստավոր պայմաններ է ստեղծում դպրոցական ուսուցմանը նախապատրաստվելիս: Կապակցված խոսքի հոգեբանական բնույթը, դրա մեխանիզմները և զարգացման առանձնահատկությունները բացահայտված են Ժ.Պիաժեի,Լ.Ս.Վիգոտսկու, Ա.Ա.Լեոնտևի, Ս.Լ.Ռուբինշտեյնի և այլոց աշխատություններում: Նրանք ընդգծում են կապակցված խոսքի բարդ կառուցվածքը և խոսքի համակարգված ձևավորման անհրաժեշտությունը:

Նախադպրոցական տարիքի երեխայի կապակցված խոսքի զարգացման մեթոդական հիմքերը ներկայացված են Մ.Մ. Կոնինայի,Օ. Ի.Սոլովյովայի, Ե.Ի. Տիխեևայի, Ե.Ա.Ֆլյորինայի աշխատություններում: Մենախոսության բովանդակության և մեթոդների ուսուցման խնդիրների վերաբերյալ բեղմնավոր ուսումնասիրություններ են կատարել Ա.Մ. Բորոդիչը, Վ.Վ. Գերբովան, Ե. Ա. Սմիրնովան, Օ. Ս. Ուշակովան, և այլք: Գիտական ուսումնասիրությունների մեծ մասն ուղղված է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման խնդրին, քանի որ այս տարիքում է տեղի ունենում անցում իրադրային խոսքից ենթատեքստային խոսքին (Ս.Լ. Ռուբինշտեյն, Դ.Բ. Էլկոնին): Ավագ նախադպրոցական տարիքը երեխայի խոսքի բարձր ակտիվության և խոսքի բոլոր կողմերի զարգացման շրջան է (Մ.Մ. Ալեքսեևա, Ա.Ն. Գվոզդև, Մ.Մ. Կոլցովա, Գ.Մ. Լյամինա, Օ.Ս. Ուշակովա, Դ.Բ. Էլկոնին, Վ. Ի. Յադեշկո և ուրիշներ):

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացմանը զուգընթաց երեխաների առօրյա են ներխուժել համակարգչային նորագույն խաղեր, որոնք ինչպես հայտնի է, չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ: Նախադպրոցական տարիքի երեխաների գործունեության բոլոր ձևերը պետք է ուղեկցվեն խոսքով, որպեսզի երեխաներն ազատ կարողանան հաղորդակցվել ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ: Ուսումնասիրությունները փաստում են, որ ավագ նախադպրոցական տարիքի երեխաները լուրջ դժվարություններ են ունենում հաղորդակցման գործընթացում, նրանց խոսքում, գրեթե բացակայում են հաղորդակցման մշակույթի տարրական նորմերը. նրանք հաճախ խոսում են առանց զգացմունքայնության, առանց հաշվի առնելու դինացինն իրեն լսում է, թե՛ ոչ, խոսքը գրագետ է հնչում, թե՛ ոչ:

Արտասահմանյան մանկավարժների, հոգեբանների և լեզվաբանների կողմից իրականացվել են բավական խորը ուսումնասիրություններ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ: Սակայն այդ ուսումնասիրությունները կատարվել են՝ այլ ազգային միջավայրերում, որոնք ունեն լեզվային այլ առանձնահատկություններ, երեխայի կողմից սեփական լեզվին տիրապետելու գործընթացի, լեզվի նրբությունները յուրացնելու միանգամայն այլ առանձնահատկություններ: Մեր կողմից իրականցված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հայ իրականության մեջ նախադպրոցականի կապակցված խոսքի

զարգացման առանձնահատկությունները գրեթե ուսումնասիրված չեն: Այստեղից էլ անհարժեշտություն է առաջանում լրացնելու այդ բացթողումը, քանի որ չենք կարող արտասահմանյան առաջադեմ մանկավարժ-հոգեբանների կատարած ուսումնասիրությունների արդյունքները ներդնել հայ երեխաների կապակցված խոսքի զարգացման գործընթացում: Եվ սա ունի իր հիմնավոր բացատրությունը. Յուրաքանչյուր լեզու ունի իր առանձնահատկությունները՝ հնչյունային, քերականական: Ինչպես գիտենք, հայոց լեզուն կցական լեզու է՝ թեքության որոշ տարրերով՝արտաքին և ներքին հոլովումների բարդությամբ, տարբերվում է իր բարդ հնչյունային համակարգով, քերականությամբ, հետևաբար, նախադպրոցական տարիքի հայ երեխաները լեզուն յուրացնելիս կհանդիպեն այնպիսի բարդությունների, ինչպիսիք չկան, օրինակ, անգլերենում, ռուսերենում կամ սլավոնական լեզվաընտանիքին պատկանող այլ լեզուներում: Այստեղից էլ պարզ է դառնում, որ հայոց լեզվի յուրացման առանձնահատկությունների հետ կապված՝ բավական լուրջ ուսումնասիրություններ պետք է կատարվեն երեխայի կապակցված խոսքի զարգացման բնագավառում: Կապակցված խոսքը հանդիսանում է երեխայի խոսքի զարգացման ցուցանիշ. այն իր մեջ ներառում է խոսքի հնչյունային կուլտուրան, քերականական կառուցվածքը, բառապաշարը: Մեր օրերում հայ իրականության մեջ դժվար է հանդիպել երեխայի, որը լիարժեք կապակցված խոսք ունենա, կարողանա ազատ և գրագետ հաղորդակցվել, հանգիստ, անկաշկանդ ներգրավվել երկխոսության մեջ, այն շարունակել և ավարտին հասցնել, կամ ՝ առանց մեծահասակի օգնության որևէ երևույթի մասին մենախոսել (նկարագրում,ստեղծագործական պատմում,վերապատմում,քննարկումներ): Վերը նշված հարցերի հրատապ լուծման անհրաժեշտությունից էլ բխում հիմնախնդրի արդիականությունը: Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման և շտկման մանկավարժական գործընթացը հասակակիցների հետ համատեղ գործունեության պայմաններում ոչ միայն կնպաստի հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև երեխաներին զերծ կպահի համաշխարհային տեղեկատվական հսկայածավալ հոսքի արդյունքում մայրենի լեզվի կրած վնասներից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է բացահայտել ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման մեթոդական հիմքերը համատեղ գործունեության ընթացքում, հիմնավորել դրանց իրականացման մանկավարժական պայմանները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ կապակցված խոսքի զարգացման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ համատեղ գործունեության ընթացքում ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման մանկավարժական պայմաններն են:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ: Ենթադրվում է, որ համատեղ գործունեությունը կնպաստի ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացմանը, եթե՝

- խրախուսվի երկխոսությունը երեխաների միջև,
- խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում առաջարկվեն ստեղծագործական բնույթի խմբային աշխատանքներ (հորինել հեքիաթ, պատմություն, հանելուկ և այլն),
- երկխոսության և մենախոսության կարողությունները գործնականում զարգանան երեխաների համատեղ գործունեության ընթացքում (խաղային, աշխատանքային, կերպարվեստային),
- մանկապարտեզի մանկավարժական գործընթացում ներդրվի և կիրառվի կապակցված խոսքի զարգացման (ТРИЗ- теория решения изобретательских задач) տեխնոլոգիան,

- մշակվեն և փորձարարությամբ հիմնավորվեն ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման մանկավարժական պայմանները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.

1. Ուսումնասիրել ավագ նախադպրոցականների կապակցված խոսքի դրսևորումները, զարգացման աստիճանը, հաղորդակցման դժվարությունները:
2. Բացահայտել համատեղ գործունեության ընթացքում ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման բովանդակությունը, որոշել ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման չափանիշների ցուցանիշներն ու մակարդակները:
3. Մշակել համալիր պարապմունքներ՝ ուղղված ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացմանը:
4. Մշակել և փորձարարաությամբ ստուգել համատեղ գործունեության ընթացքում կապակցված խոսքի զարգացման մանկավարժական պայմանների արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հետազոտությայն համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել երեխայի խոսքի զարգացման հոգեբանամանկավարժական դրույթները (Լ.Ա.Վենգեր, Օ.Ս.Ուշակովա), լեզվի՝ որպես նշանային համակարգի լեզվաբանական տեսությունը (Ն.Ի.Ժինկին, Ֆ.դե Սոսյուր), խոսքի զարգացման հոգեբանական տեսությունները (Լ.Ս. Վիգոտսկի, Օ.Մ. Դյաչենկո, Ա.Վ. Զապորոժեց, Վ.Ս. Մուխինա): Հոգեբանական գիտության այն մոտեցումն, ըստ որի խոսքն ակտիվ, նպատակաուղղված գործոն է՝ միջնորդավորված լեզվի միջոցով և պայմանավորված իրավիճակով: Խոսքը կենտրոնական տեղ է զբաղեցնում հոգեկանի զարգացման գործընթացում. այն ունի իր բովանդակությունն ու ձևը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- հետազոտության թեմայի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանաման-կավարժական, հոգեբանական մոտեցումների, գիտամեթոդական, լեզվաբանական ուսումնասիրությունների, մասնագիտական գրականության և նախադպրոցական մանկավարժության պատմահայեցակարգային վերլուծություն,
- այդ ուղղությամբ նախադպրոցական հաստատությունների փորձի ուսումնասիրում,
- փորձարարական աշխատանքների տեսական ընդհանրացում, փորձարարական մեթոդներ՝ զրույց, հարցազրույց, անկետավորում, մանկավարժական փորձարարություն, բանավոր խոսքի ախտորոշման Տ.Ա.Ֆոտեկովայի թեստային մեթոդիկա, Օ.Ս. Ուշակովայի կապակցված խոսքի զարգացման մակարդակը բացահայտող մեթոդիկա, ՍԽԼՏ՝ ստեղծագործական խնդիրների լուծման տեսություն տեխնոլոգիա,
- փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծության մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ: Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով 2007– 2011 թթ. ընթացքում:

1-ին փուլում (2007-2008թթ.) իրականացվել է ատենախոսության թեմայի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրություն, ուսումնասիրության խնդրի ժամանակակից դրվածքի վերլուծություն և գնահատում: Առանձնացվել են այն մեթոդիկաներն ու մեթոդները, որոնք պետք է կիրառվեն գիտափորձի ընթացքում: Արձանագրվել են ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման առանձնահատկությունները համատեղ գործունեության ընթացքում:

2-րդ փուլում (2008-2009թթ.) հստակեցվել են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքի ձևերը՝ ելնելով ավագ նախադպրոցական տարիքի երեխաների գործունեության առանձնահատկություններից՝ մշակվել են հատուկ համալիր պարապմունքներ, մանկավարժական պայմաններ, որոնք ներառվել են փորձարարության համար բազային հիմք հանդիսացող մանկապարտեզներում:

3-րդ փուլում (2009-2011թթ.) կազմակերպվել և իրականացվել են նախատեսված աշխատանքներն ու մանկավարժական փորձարարություն, փորձարկվել է մշակված պարապմունքների, ինչպես և երեխաների համատեղ գործունեության ուղղորդման մոդելի արդյունավետությունը: Հիմնավորվել է համատեղ գործունության ընթացքում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման արդյունավետությունը հատուկ կազմակերպված մանկավարժական և խոսքային միջավայրի պայմաններում: Ընդհանրացվել և համակարգվել են փորձարարական հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

- Բացահայտվել են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման առանձնահատկությունները:
- Հստակեցվել են կապակցված խոսքի դրսևորման ձևերը երեխաների համատեղ գործունեության ընթացքում՝ խաղային, ուսումնական, աշխատանքային, կերպարվեստային, ինչպես նաև՝ մենախոսության դրսևորման ձևերը՝ պատմում, վերապատմում, նկարագրում, քննարկում:
- Մշակվել է ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման և համատեղ գործունեության մոդել՝ պարապմունքների, խաղի և մանկան աշխատանքի ընթացքում երկխոսելու և մենախոսություն կառուցելու կարողությունների զարգացման նպատակով:
- Մշակվել, տեղայնացվել և կիրառվել է կապակցված խոսքի զարգացման ՍԽԼՏ տեխնոլոգիան:
- Փորձարարությամբ հիմնավորվել են ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացմանն ուղղված արդյունավետ մանկավարժական պայմաններ՝ զարգացնող-առարկայական միջավայր, համալիր պարապմունքներ, խաղեր, հանելուկներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Մշակվել է ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի ձևավորման և զարգացման տեսական հիմունքները:
- Բացահայտվել և տեսականորեն հիմնավորվել են ավագ նախադպրոցականների կապակցված խոսքի զարգացման մանկավարժական պայմանները համատեղ գործունեության ընթացքում:
- Հետազոտության արդյունքները կհարստացնեն նախադպրոցական մանկավարժության տեսական դրույթները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջարկվող մանկավարժական պայմանները՝ կապակցված խոսքի զարգացմանն ուղղված միջոցները, ՍԽԼՏ տեխնոլոգիայով մշակված պարապմունքերի համակարգը, ախտորոշման եղանակները, մեթոդական ցուցումները կարող են հաջողությամբ իրագործվել մանկապարտեզի մանկավարժական գործընթացում, հետազոտության արդյունքները՝ մանկավարժական բուհերի համապատասխան մասնագիտության ուսանողների ուսումնական գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ապահովել են ժամանակակից մանկավարժության և հոգեբանության հետազոտությունների և փորձարարական աշխատանքների արդյունքները: Հիմնախնդրին համատասխան ընդգրկված հետազոտական մեթոդները հաստատված են փորձարարական տվյալներով:

Հետազոտության հիմնական տեսական դրույթների և գործնական երաշխավորագրերի ու հանձնարարականների փորձաքննությունն ու ներդրումն իրականացվել են Երևանի թիվ 126, 5, 43, մանկապարտեզներում: Փորձարարական աշխատանքում ընդգրկվել է նշված մանկապարտեզներ հաճախող ավագ նախադպրոցական տարիքի շուրջ 120 երեխա: Արդյունքները քննարկվել և դրական են գնահատվել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի նիստերում, մեթոդական սեմինարներում և գիտական համաժողովներում: Գիտափորձն իրականացվել է երեք փուլով 2007–2011 թթ. ընթացքում:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԵՆ.

1. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքը երկխոսության և մենախոսության կարողությունների միասնություն է, որն անհրաժեշտ է լիարժեք հաղորդակցվելու համար: Ավագ նախադպրոցականի զարգացած կապակցված խոսքի չափանիշներն են. հաղորդակցվելու կարողությունը, երկխոսության պատրաստակամությունն ու հասակակիցների տարաբնույթ հարցադրումներին համարժեք արձագանքելու կարողությունը, երկխոսության մշակույթը:

2. Հետազոտությամբ մշակված ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման և համատեղ գործունեության մոդելը, մանկավարժական պայմանների համալիրն ապահովում են նախադպրոցական հաստատությունում մանկավարժական գործընթացի արդյունավետությունը՝այն ներառում է.

- խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում առաջարկվող և ՍԽԼՏ՝ ստեղծագործական խնդիրների լուծման տեսություն տեխնոլոգիայի սկզբունքներով կազմակերպվող պարապմունքեր ստեղծագործական բնույթի խմբային աշխատանքներ (հորինել հեքիաթ, պատմություն, հանելուկ և այլ),
- երեխաների համատեղ գործունեության (խաղային, աշխատանքային, կերպարվեստային)և խոսքի զարգացման պարապմունքների ընթացքում ձևավորվող երկխոսության և մենախոսության կարողությունների գործնական կիրառումը,
- համատեղ գործունեության ընթացքում երեխաների քննարկումներն ու բանավեճերն ուղղորդելը,
- երեխաների կողմից սեփական կապակցված խոսքը կառուցելու, վերահսկելու, հարկ եղած դեպքում այն շտկելու կարողության գործնականում կիրառումը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, հավելվածից և 134 անուն գրականության ցանկից,այն պարունակում է 5 գծապատկեր, 6 տրամագիր և 4 աղյուսակ:Ատենախոսության ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով կազմում է 157 էջ՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և

գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին՝ «Նախադպրոցականի խոսքի զարգացման տեսական և մեթոդաբանական վերլուծությունը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին «Նախադպրոցականի խոսքի զարգացման մեթոդաբանական հիմնավորումը» ենթագլխում խոսվում է նախադպրոցական տարիքում երեխայի խոսքի զարգացման սենզիտիվության մասին, բացահայտվում են լեզվի և խոսքի զարգացման մեթոդաբանական հիմքերը:Խոսքը մարդու ի ծնե ընդունակությունը չէ. այն ձևավորվում,զարգանում և կատարելագործվում է աստիճանաբար, մարդու զարգացմանը զուգընթաց: Մարդն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում լեզվական հիմնական ընդունակություններ և բառապաշար: Յուրաքանչյուր լեզու ունի իր բառապաշարն ու իր արտասանությունը, որը ձեռք է բերվում և կուտակվում հասարակության զարգացման ընթացքում: Լեզուն, միաժամանակ, յուրաքանչյուր ժողովրդի ազգային գիտակցության արտահայտության ձևն է Խոսքի զարգացման հարցերի գիտական հիմնավորման մեջ մեծ է Ե. Ի. Տիխեևայի աշխատությունների դերը: Նա գտնում էր, որ մայրենի լեզուն ամենամեծ մանկավարժն է, և երեխայի դաստիարակությունը պետք է ընթանա այդ ֆոնի վրա: Նա երեխայի խոսքի զարգացման գործընթացը կապում էր երեխայի անձի զարգացման հետ և գտնում, որ բազմաբնույթ խոսքի կարողությունը հանդիսանում է անձի զարգացման կարևոր և բնութագրական երևույթներից մեկը: Խոսքի զարգացման մեթոդիկայի բնագավառում մեծ է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե. Ա. Ֆլյորինայի դերը: Նրա գիտական հետաքրքրությունները վերաբերում են նախադպրոցական դաստիարա-կության երկու բնագավառների՝ երեխայի ստեղծագործական մտածողության զարգացում և խոսքի զարգացում: Ֆ.Ա. Սոխինը եղել է Ս. Լ. Ռուբինշտեյնի աշակերտը, նա մանկան խոսքի մեծ գիտակ է, լեզվաբան և հոգեբան: Նրա անվան հետ է կապվում մեթոդիկայի զարգացման նոր մակարդակը: Սոխինի մշակած մեթոդական տեսությունը ներառում է հոգեբանական, հոգելեզվաբանական, լեզվաբանական և բուն մանկավարժական ասպեկտներ: Նա ապացուցեց, որ երեխայի խոսքի զարգացումը ունի ինքնուրույն նշանակություն և չպետք է դիտվի որպես շրջապատող աշխարհի հետ ծանոթացման ասպեկտ: Ըստ Պիաժեի՝ երեխայի զարգացման յուրաքանչյուր փուլ ազդում և առաջ է տանում խոսքի զարգացումը: Այստեղից էլ ելնելով՝ Պիաժեն խոսքի ֆենոտիպ զարգացմանը տալիս է գենետիկական բնույթ: Ըստ նրա՝ օնտոգենեզում երեխայի իմացական զարգացումը պայմանավորված է ժառանգական կենսաբանական ծրագրով և ընթանում է որոշակի հաջորդական փուլով: Բայց այդ փուլերը բացահայտվում և դրսևորվում են միայն միջավայրի հետ փոխներգործելու շնորհիվ: Պիաժեն երեխայի խոսքին տալիս էր էգոցենտրիկ բնույթ: Ժ. Պիաժեին հակադրվել է Լ.Ս. Վիգոտսկին՝ նշելով, որ երեխայի խոսքն սկզբից ևեթ ունի սոցիալական բնույթ: Ըստ նրա՝ էգոցենտրիկ խոսքը յուրահատուկ անցման փուլ է հանդիսանում սոցիալական խոսքի և բուն անհատական խոսքի՝ ներքին խոսքի միջև. ներքին խոսքը սոցիալական խոսքի հետագա ինտերիորիզացումն ու «անհատականացումն է»: Այսինքն, ներքին խոսքի արմատները գտնվում են արտաքին խոսքում: Հայ առաջադեմ հասարակական գործիչներն ու մանկավարժները նշում էին, որ մեր ազգին անհրաժեշտ է կրթություն, դաստիարակություն, բարեկարգ դպրոց և ուսման տարածում հայ հասարակության մեջ: 1820-ական թվականներից աստիճանաբար և մեծ դժվարությամբ սկսեցին բացվել աշխարհիկ վարժարաններ: Այս շրջանում մանկավարժական, հասարակական լայն գործունեություն են ծավալել Մեսրոպ Թաղիադյանը, Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս

Նազարյանը, Նիկողայոս Զորոյանը և այլոք, ովքեր ամեն կերպ ձգտում էին լուսավորություն տարածել, ընդլայնել հայկական կրթօջախների թիվը, կրթել ժողովրդին, զինել գիտելիքներով:

Երկրորդ՝ «Երեխայի խոսքի զարգացման լեզվաբանական և հոգեբանական առանձնահատկությունները» ենթագլխում բացահայտվել են նախադպրոցականի խոսքի զարգացման լեզվաբանական և հոգեբանական առանձնահատկությունները: Լեզվական երևույթների յուրացման համար շարժիչ ուժ է հանդիսանում այն հակասությունը, որն առաջանում է երեխայի ունեցած լեզվական նախատիպային կարողությունների և այն պահանջների միջև, որոնք առաջադրվում են այդ կարողությունների նկատմամբ շրջապատող միջավայրի կողմից: Այն կարծես երեխային մղում է «օգտվել» լեզվից: Մինչև լեզվին տիրապետելը երեխան անցնում է մինչխոսքային փուլ, որն իր հերթին բաժանվում է նախաթոթովանքի և թոթովանքի շրջանների: Խոսքի զարգացման հոգեբանական հիմքը կազմում է խոսքի և խոսքային գործունեության տեսությունը: Երեխայի հոգեկանի զարգացումը սկսվում է հաղորդակցումից: Այն սոցիալական ակտիվության առաջին տեսակն է, որն ի հատ է գալիս օնտոգենեզում և որի շնորհիվ նորածինն անհատական զարգացման համար ստանում է անհրաժեշտ ինֆորմացիա: Հաղորդակցման ժամանակ սկզբում ընդօրինակման, այնուհետև բառային հաղորդակցման հիման վրա ձեռք է բերվում երեխայի կյանքի հիմնական փորձը: Գործունեության նոր ձևի ի հայտ գալը և հասակակիցների ու մեծահասակների հետ նոր հարաբերությունների ստեղծումը հանգեցնում է խոսքի ֆունկցիայի և ձևի հետագա տարբերակմանը: Եթե ծնված օրվանից խոսքը կատարում է իր գլխավոր՝ հաղորդակցման ֆունկցիան, սկսած 2 տարեկանից՝ իրականացնում է ճանաչողական ունակությունների ձևավորման գործառույթ, այն է՝ երեխան սկսում է ճանաչել շրջապատող առարկաները, դրանց միջև եղած կապերը: Արդեն նախադպրոցական տարիքում, երբ երեխայի էգոցենտրիկ խոսքը ներքնայնանում է և առաջ է գալիս ներքին խոսքը, իրականացվում է ինտելեկտուալ կարողությունների ձևավորման ֆունկցիան. խոսքը հանդես է գալիս որպես վարքի կարգավորման միջոց:

Երրորդ՝ «Ավագ նախադպրոցականի խոսքի զարգացման առանձնահատկությունները» ենթագլխում խոսվում է այն մասին, որ Նախադպրոցական տարիքը համարվում է բուռն սոցիալականացման շրջան[: Այն հանդիսանում է հոգեկանի ինտենսիվ զարգացման, հոգեֆիզիոլոգիական գործառույթների, անձնավորության տարբեր կազմավորումների առաջացման փուլ: Սոցիալական նոր իրադրության առաջացման հետ կապված շրջապատող մարդկանց միջավայրում նախադպրոցականի գրաված տեղն էականորեն տարբերվում է այն տեղից, որը բնորոշ է վաղ մանկական տարիքի երեխայի համար: Ավագ նախադպրոցական տարիքի երեխան, երբ փորձում է ինչ-որ բան պատմել, առաջ է գալիս այդ տարիքին համապատասխան խոսքային կառույց. նա սկզբից օգտագործում է դերանուններ, ապա զգալով իր ասածի անհստակությունը՝ կիրառում է նաև գոյականներ. այն հանդիսանում է երեխայի խոսքի զարգացման գոյականական էտապը: Արդյունքում երեխան տիրապետում է կոնտեքստային խեսքին, ուր բավական շատ է նկարագրվում իրավիճակը: Երեխայի խոսքի յուրահատուկ տեսակ է բացատրական խոսքը: Ավագ նախադպրոցական շրջանում հաճախ պահանջ է առաջանում բացատրել իր հասակակիցներին խաղի կանոնները. այս ժամանակ առաջ է գալիս բացատրական խոսքը, որը երեխայից պահանջում է մտքի հաջորդական շարադրում, իրավիճակի հիմնական կապերի և հարաբերությունների առանձնացում: Շարունակում են կատարելագործվել երեխայի խոսքի բոլոր կողմերը: Ավագ նախադպրոցական տարիքում երեխան խոսքի զարգացման այնպիսի մակարդակի է հասնում, երբ լեզուն, խոսքը դառնում են ոչ միայն

հաղորդակցման և աշխարհաճանաչման լիարժեք միջոց, այլև գիտակցական աշխարհընկալման առարկա:

Չորրորդ՝ «Նախադպրոցականի խոսքի զարգացման խնդիրների համառոտ բնութագիրը» ենթագլխում նկարագրվում են երեխայի խոսքի զարգացման խնդիրները՝ հնչյունային կուլտուրայի դաստիարակում, քերականական կողմի ձևավորում, բառապաշարի հարստացում, կապակցված խոսքի զարգացում, գեղարվեստական գրականության հետ ծանոթացում, լեզվի տարրական երևույթների գիտակցում, գրուսուցման նախապատրաստում: Խոսքի զարգացման խնդիրները հիմնականում լուծվում են տարիքային բոլոր խմբերում տարբեր բովանդակությամբ, որը կախված է երեխաների տարիքային առանձնահատկություններից: Նշված խնդիրներից յուրաքանչյուրն ունի և ուսուցողական, և դաստիարակչական բնույթ: Խոսքի զարգացման գործընթացում տեղի է ունենում անձի մտավոր որակների ձևավորում, լուծվում են բարոյական, գեղագիտական խնդիրներ, որոնք չեն կարող լուծվել իրարից առանձին: Յուրաքանչյուր խնդրի բովանդակությունն ունի իր յուրահատկությունը և պահանջում է առավել հարմար ուսուցման մեթոդների ընտրություն: Իմանալով, թե տվյալ պարապմունքի ընթացքում ինչ խնդիր է իրականացվելու՝ դաստիարակը նպատակաուղղված ներգործում է խոսքի որոշակի որակների զարգացմանը:

Ատենախոսության **երկրորդ՝ «Ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման առանձնահատկությունները» գլուխը** բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի ընդհանուր բնութագիրը» ենթագլխում բացահայտված է «կապակցված խոսք» հասկացության էությունը և ավագ նախադպրոցական տարիքում դրա զարգացման առանձնահատկությունները: «Կապակցված խոսք» կամ «խոսքի կապակցվածություն» հասկացություններն օգտագործվում են թե՛ լեզվաբանների, թե՛ հոգեբանների, թե՛ մանկավարժների կողմից: Մեթոդական գրականության մեջ կապակցված խոսք համարվում է բովանդակալից, իմաստային և կառուցվածքային ամբողջություն կազմող, թեմատիկ առումով ավարտուն, գրական լեզվի նորմաներից չշեղվող խոսքը: Ավագ նախադպրոցական տարիքում կապակցված խոսքի զարգացումը հասնում է բավականին բարձր մակարդակի: Հարցերին երեխան կոնկրետ է պատասխանում, զարգանում է ընկերների պատասխանները գնահատելու, դրանք շտկելու կամ լրացնելու ունակությունը: Ըստ առաջարկված թեմայի՝ 6 տարեկան երեխան կարողանում է կազմել տրամաբանված, հաջորդական ու հստակ պատմություն:

Երեխայի համար մոնոլոգ խոսքն ավելի դժվար է, քան դիալոգ խոսքը: Այն ավելի ծավալուն է, պահանջում է լավագույն հիշողություն, լարված ուշադրություն, բովանդակալից խոսք: Մենախոսությունը հիմնվում է մտածողության, տրամաբանության վրա, պատմելու կարողությունը մեծ դեր է խաղում հաղորդակցման գործընթացում: Կապակցված խոսքի ձևավորման ոչ պակաս կարևոր պայմաններից է հանդիսանում նախադպրոցականի կողմից լեզվին՝ որպես հաղորդակցման միջոցի, տիրապետելը: Դ.Բ. Էլկոնինի տվյալների համաձայն՝ նախադպրոցական տարիքում հաղորդակցումը կրում է անմիջական բնույթ:

Երկրորդ՝ «Մենախոսությունը որպես ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի դրսևորման ձև» ենթագլխում բացահայտված են նախադպրոցականի մենախոսության զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Մենախոսությունը կապակցված, տրամաբանական հաջորդականությամբ արտահայտած խոսքն է, որը ժամանակային առումով երկար է և չի ակնկալում լսողի անհապաղ պատասխանը: Այն ունի անհամեմատ բարդ կառուցվածք, արտահայտում է մի մարդու մտքեր, որոնք անծանոթ են լսողին: Այդ պատճառով էլ պատմումը (մոնոլոգ

խոսքը) առավել ընդգրկուն է (տեղեկատվական առումով): Մոնոլոգ խոսքում անհրաժեշտ է ներքին պատրաստվածություն, ասելիք խոսքի վերաբերյալ առավել երկար մտածելու և կարևոր ասելիքի վրա կենտրոնանալու կարողություն: Այստեղ կարևոր են ոչ խոսքային միջոցները (ժեստեր, դիմախաղ, ինտոնացիա): Մոնոլոգ խոսքի բնութագրական են գրական խոսքը, տրամաբանորեն ավարտուն պատմում, ձևավորված շարահյուսություն: Մոնոլոգ խոսքի կապակցվածությունը ապահովում է միայն խոսողի կողմից: Մոնոլոգ խոսքը կարգավորվում է ներքին մղումներով, և դրա բովանդակությունն ու լեզվական միջոցները ընտրում է հենց խոսողը: Կախված նշանակությունից (գործառույթից)՝ առանձնացնում են մենախոսության 4 տեսակ. նկարագրություն, պատմում, քննարկում, կոնտամինացիա (խառնված տեքստեր):

Երրորդ՝ «Երկխոսությունը որպես նախադպրոցականի խոսքային հաղորդակցման ձև» ենթագլխում նկարագրվում է նախադպրոցականի երկխոսության զարգացման առանձնահատկությունները, տեսակները և բովանդակությունը: Երկխոսությունը սոցիալական փոխազդեցությունների բարդ ձև է: Երկխոսության մեջ մտնելը երբեմն ավելի բարդ է լինում, քան մենախոսություն կառուցելը: Սեփական խոսքի, հարցերի, պատասխանների շուրջ մտածելը տեղի է ունենում միաժամանակ զրուցակցի խոսքի հետ: Երկխոսությունը մի քանի բարդ ունակություններ է պահանջում. լսել և ճիշտ ընկալել զրուցակցի միտքը, սեփական դատողությունները պատասխանի տեսքով ձևակերպել, այն լեզվական միջոցներով ճիշտ արտահայտել, պահպանել զգացմունքային որոշակի տոն, հետևել լեզվային ձևի ճշտությանը, որի մեջ արտահայտվում են մտքերը, լսել սեփական խոսքը, որպեսզի կարողանալ վերահսկել դրա անսխալությունը, և, եթե անհրաժեշտ է, որոշակի ճշտումներ և ուղղումներ մտցնել: Դիալոգ հաղորդակցման ձևն ի սկզբանե երեխաներին տրված չէ: Դրա կայացումը և զարգացումն անցնում են նախադիալոգային (դուետ, կոլեկտիվ մոնոլոգ), կոորդինացված խոսքային գործողությունների փուլ՝ աստիճանաբար մոտենալով տեսականորեն բազմաբովանդակ երկխոսության տիրապետմանը: Երկխոսություն տիրապետելն ավելին է, քան ուղղակի խոսքի տիրապետելը: Երկխոսության օրինակներ երեխան ստանում է մեծահասակի հետ շփման ժամանակ: Հենց այդ ժամանակ էլ նախադպրոցականը սկսում է խոսել այն առարկաների, իրերի և երևույթների մասին, որոնք բացակայում են տվյալ պահին. երեխան յուրացնում է ոչ իրադրային խոսքը: Երկխոսության կապակցվածությունն ապահովվում է հնչերանգի և լեզվական միջոցների կիրառման հաշվին (բառերի, առանձին արտահայտությունների կրկնությունն, դերանունների, միարմատ բառերի, կրճատ նախադասությունների կիրառում): Երկխոսությունը հենվում է ոչ վերբալ հաղորդակցման վրա. վարելով երկխոսությունը՝ երեխան միաժամանակ կողմնորոշվում է ենթատեքստերի, հաղորդակցման իրադրության, զրուցակցի խոսքի, ինչպես նաև լեզվի վրա:

Չորրորդ՝ «Գործունեության տարբեր ձևերը որպես ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման միջոց» ենթագլխում վեր են լուծվել գործունեության տարբեր ձևերի ընթացքում նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման առավելությունները, ձևերը և բովանդակությունը: Նախադպրոցական տարիքում երեխայի կապակցված խոսքի զարգացումն իրականանում է գործունեության տարբեր ձևերի՝ խաղի, աշխատանքային գործունեության և պարապմունքների ընթացքում: Ավագ նախադպրոցական տարիքը արտաքին աշխարհի դերային արտացոլման, արտապատկերման ամենաակտիվ շրջանն է: Այս տարիքում խաղային գործունեության բովանդակությունը բխում է երեխայի իրական կյանքի փորձից: Յուրացնելով իրական

հասարակական փորձը, ձեռք բերելով սեփական փորձ և սոցիալական հմտություններ՝ երեխան օրինաչափորեն ձգտում է խաղարկել այդ փորձը՝ կարծես ջանալով այն փորձարկել ակտիվ գործունեության մեջ: Գոյություն ունեն երկխոսությամբ ուղեկցվող բազմաթիվ խաղեր (Սագեր-սագեր, Ներկեր, Այգեպան): Այս խաղերը սիրված են երեխաների կողմից. բավարարելով նրանց զվարճանքի, ուրախության, որևէ հայտնագործություն կատարելու պահանջները՝ դրանք հիմք են հանդիսանում համատեղ ուրախ ապրումների, ֆիզիկական փոխհարաբերությունների, զգացմունքային կապերի, խաղային և խոսքային փոխներգործության համար: Աշխատանքը անձնավորության ներդաշնակ դաստիարակության միջոց է: Աշխատանքում սկզբնավորվում են անձնավորության բարոյական հատկանիշները: Այստեղ ձևավորվում է երեխայի վերաբերմունքն աշխատանքի, աշխատավոր մարդու նկատմամբ, դիտարկվում են սովորույթները, բնավորությունը: աշխատանքի ձևերի իրականացումն ուղեկցվում է խոսքային ձևերով՝ զրույց, հարց ու պատասխան, հաղորդագրություն, հանձնարարության կատարումի համաձայնություն, կամ դրանից քաղաքավարի հրաժարում: Աշխատանքային գործունեությունը մեծապես նպաստում է երեխաների պատկերացումների և խոսքի զարգացմանը: Երեխան կոլեկտիվում ընդօրինակում է ինչպես մեծահասակների, այնպես էլ հասակակիցների խոսքը: Նախադպրոցականի գործունեության ձևերից հատկապես կարևորվում է պարապմունքը, մասնավորապես խոսքի զարգացման պարապմունքը՝ որպես ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման միջոց: Խոսքի զարգացման պարապմունքները տարբերվում են մյուս պարապմունքներից նրանով, որ դրանց ժամանակ հիմնական գործունեությունը խոսքային է: Խոսքային գործունեությունը կապված է մտավոր գործունեության, մտավոր ակտիվության հետ: Երեխաները լսում են, մտածում են, պատասխանում հարցերին, իրենք են հարցեր տալիս, համեմատում են, եզրակացություններ և ընդհանրացումներ անում: Երեխան իր մտքերն արտահայտում է խոսքում: Պարապմունքի դժվարությունը կայանում է նրանում, որ երեխաները միաժամանակ զբաղվում են մտախոսքային գործունեության տարբեր ձևերով. խոսքի ընկալմամբ և դրա ինքնուրույն գործունեությամբ: Նրանք մտածում են պատասսխանը, իրենց բառապաշարից ընտրում անհրաժեշտ բառ՝ առավել հարմար տվյալ իրավիճակում, քերականորեն կազմում են այն, օգտագործում են նախադասության և կապակցված արտահայտության մեջ:

Ատենախոսության **երրորդ՝ «Համատեղ գործունեության ընթացքում ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման փորձարարական հետազոտությունների վերլուծությունը»** գլուխն ունի երկու ենթագլուխ:

Առաջին՝ «Համատեղ գործունեության ընթացքում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքների ընթացքը» ենթագլխում ներկայացվում է փորձարարական հետազոտության ընթացքը, համատեղ գործունեության ընթացքում ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման մոդելը, ՍԽԼՏ կապակցված խոսքի զարգացման տեխնոլոգիան, միջոցները, կապակցված խոսքի զարգացման մանկավարժական պայմանները:

Երկրորդ՝ «Ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացմանն ուղղված փորձարարական հետազոտության կազմակերպման առանձնահատկությունները, խնդիրները, փուլերը, անցկացման մեթոդիկան, արդյունքների վերլուծությունը» ենթագլխում ներկայացված են գիտափորձի անցկացման մեթոդները, արձանագրող, ձևավորող և ստուգիչ փուլերի ընթացքը և արդյունքների վերլուծությունը: Մեր կողմից կազմակերպված արձանագրող գիտափորձն ընթացավ 2 փուլով.

1-ին փուլում զրույցի, դիտման, անկետավորման մեթոդների միջոցով արձանագրեցինք նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական անձնակազմի կողմից ավագ նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը, դիտեցինք երեխաներին պարապմունքների և ռեժիմային մյուս պահերի ժամանակ:

2-րդ փուլում մեր կողմից մշակված, ինչպես նաև Օ.Ս. Ուշակովայի կողմից մշակված և տեղայնացված կապակցված խոսքի զարգացման մակարդակը բացահայտող մեթոդիկաների միջոցով արձանագրեցինք ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման մակարդակը: Դիտումները և արձանագրությունները ցույց տվեցին, որ երեխաների մոտ բացակայում են դիալոգ խոսքին տիրապետելու որոշ ունակություններ: Շփման ժամանակ արձանագրվել են ինչպես նախաձեռնողական այնպես էլ պատասխան արտահայտությունների կիրառման անբավարարությունը, ընդ որում, առավելապես կիրառվում էին սեփական արտահայտությունները՝ ընկերոջը պատասխանելու փոխարեն: Անցկացված մի շարք թեստերի և մեթոդիկաների հիման վրա սահմանել ենք կապակցված խոսքի զարգացման մակարդակի որոշման 5 բալանոց համակարգ, ըստ որի 5 բալը համարվում է բարձր մակարդակ, 3-4 բալը՝ միջին մակարդակ, 2 բալը՝ ցածր մակարդակ: Արդյունքներն ամփոփված են տոկոսներով աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Արձանագրող փորձարարության արդյունքները ստուգողական և փորձարարական խմբերի համեմատությամբ

	Երկխոսության զարգացում				Մենախոսության զարգացում			
	ստ. խումբ n=30		փորձ. խումբ n=30		ստ.խումբ n=30		փորձ. խումբ n=30	
	n	%	N	%	N	%	n	%
բարձր	6	20	7	24	8	27	8	27
միջին	11	37	10	33	9	30	10	33
ցածր	13	43	13	43	13	43	12	40

Փորձարարության ձևավորող փուլի ընթացքը:

Սկզբնական փուլում ենթադրվում էր երկխոսության պատրաստի օրինակների յուրացում, ինչը կնպաստեր երեխաների մեջ երկխոսական ունակությունների փորձի կուտակմանը և հետագայում դրա կիրառմանը: Այդ նպատակով իրականացրեցինք գեղարվեստական գրականության նմուշների ընթերցումներ, տիկնիկային թատրոնի, մուլտֆիլմերի, մանկական ֆիլմերի ցուցադրումներ, դիտած ֆիլմերից հատվածների մեջբերումներ և բեմականացումներ: Երեխաների ուշադրությունը գրավում էինք երկխոսության ձևերին և գործառույթներին, ինչպես նաև հերոսների կողմից երկխոսության կանոնների պահպանմանն ու կիրառմանը (նաև խախտմանը): Մենախոսության ձևերի զարգացման նպատակով կիրառվել է ՍԽԼՏ տեխնոլոգիան, որը տեղայնացվել և հարմարեցվել է որպես նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման տեխնոլոգիա:



գծապատկեր 1

Ստեղծագործական խնդիրների լուծման տեսություն խոսքի զարգացման տեխնոլոգիայի մոդել

ՍԽԼՏ-ն մենք կիրառեցինք բոլոր պարապմունքների ժամանակ, քանի որ այն առաջացնում է համատեղ գործելու ցանկություն, հաջողության իրավիճակ, ստեղծում է խնդիրների լուծման տարբերակների փոխանակման հնարավորություն: Երեխայի կողմից գտնված «գյուտերը», դրանց պարզաբանումը ակտիվացնում է մյուս երեխաների մտածողությունը, երկուստեք ընդլայնում է երևակայության սահմանները, խթանում խոսքի և մտածողության զարգացումը: Նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված ՍԽԼՏ տեխնոլոգիան՝ խաղերի և պարապմունքների համալիր ծրագիր է: Այն երեխաներին սովորեցնում է ի հայտ բերել առարկաների և երևույթների միջև եղած հակասությունները, լուծել այդ հակասությունները, փնտրել և գտնել խնդիրների լուծման հետաքրքիր տարբերակներ, փոխանակել դրանք: ՍԽԼՏ տեխնոլոգիան ներկայացված է գծապատկեր 1-ում:

Մեր կողմից իրականացված փորձարարության ընթացքում կազմակերպել ենք զարգացնող-առարկայական միջավայր, մշակել,տեղայնացրել և կիրառել ենք համալիր պարապմունքներ, հեքիաթների մոդելավորում, ՍԽԼՏ տեխնոլոգիայի կիրառմամբ խաղեր, վարժություններ, հանելուկներ, պատմումներ: Փորձարարության ստուգիչ փուլի արդյունքները հաստատելու նպատակով իրականացվել են համապատասխան մեթոդիկաներ,որոնց արդյունքում ավագ նախադպրոցականների կապակցված խոսքի զարգացման գործընթացում բավական շարժընթաց է գրանցվել: *(տե՛ս աղյուսակ 2)*

Աղյուսակ 2

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փորձարարության ամփոփիչ արդյունքները

Փորձարարության անցկացման փուլերը	Երկխոսության զարգացում												Մենախոսության զարգացում											
	Նախադպրոցականների թիվը												Նախադպրոցականների թիվը											
	ստուգողական n=30						փորձարարական n=30						ստուգողական n=30						փորձարարական n=30					
	ցածր		միջին		բարձր		ցածր		միջին		Բարձր		ցածր		միջին		բարձր		Ցածր		միջին		բարձր	
	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	n	%	N	%	n	%	N	%
արձա-նագրող	13	43	11	37	6	20	13	43	10	33	7	24	13	44	9	30	8	26	12	40	10	33	8	27
ձևավորող	11	37	11	37	8	26	6	20	11	37	13	43	12	40	10	34	8	26	2	7	12	40	16	53
Ստուգիչ	13	43	11	37	6	20	13	43	10	33	7	24	13	44	9	30	8	26	12	40	10	33	8	27

Եթե արձանագրող փորձարարության ընթացքում ավագ նախադպրոցականների կապակցված խոսքն աչքի էր ընկնում պասիվությամբ. բացակայում էր նախաձեռնողական երկխոսությունը, մենախոսելիս բառերն ու արտահայտությունները կրկնվում էին, երեխաների պատասխաններն ուղեկցվում էին մանկավարժի օգնող և հուշող հարցերով,ապա ստուգիչ փուլում արձանագրվեց կապակցված խոսքի զարգացման ակնհայտ առաջընթաց ինչպես մենախոսության,այնպես էլ երկխոսության գործընթացում: Երեխաներն իրենք էին առաջարկում հորինել հանելուկներ,կազմել հանգեր,ստեղծագործական պատմումներ: *(տե՛ս տրամագիր 1 և տրամագիր 2):*



Տրամագիր 1

Ավագ նախադպրոցականի երկխոսության զարգացման շարժընթացը



Տրամագիր 2

Ավագ նախադպրոցականի մենախոսության զարգացման շարժընթացը

Ուսումնասիրվող խնդրի տեսական վերլուծության, ինչպես նաև մանկավարժական փորձարարության արդյունքների հիման վրա կարելի է կատարել հետևյալ **եզրակացությունները.**

1. Կապակցված խոսքի զարգացումը նախադպրոցական ժամանակահատվածում բարդ և երկարատև գործընթաց է և պահանջում է բազմակողմանի նպատակաուղղված աշխատանք:
2. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքն իր դրսևորման ձևերով ապահովում է երեխաների լիարժեք հաղորդակցումը:
3. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման ցուցանիշներն են.
   - ակտիվ հաղորդակցվելու, երկխոսության մեջ մտնելու կարողությունը,
   - հարցերը հստակ ձևակերպելու և ուղղելու կարողությունը,
   - իրեն ուղղված հարցերին սպառիչ պատասխանելու կարողությունը,
   - առանց մեծահասակի օգնության ոչ մեծ պատմվածքներ, հեքիաթներ, հանելուկներ հորինելու, նկարով պատմելու, վերապատմելու կարողությունները:
4. Կապակցված խոսքի զարգացման գործում մեծ է համատեղ գործունեության դերը:
5. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման բարձր արդյունավետություն է ապահովում ՍԽԼՏ տեխնոլոգիայի կիրառումը խաղերի, պարապմունքների, համալիր պարապմունքների, ստեղծագործական, արդյունավետ, աշխատանքային գործունեության ձևերի կազմակերպման ընթացքում:
6. Փորձարարությամբ հիմնավորվել են մանկավարժական համակարգված աշխատանքների կիրառումը, ներդրված տեխնոլոգիայի և պարապմունքների արդյունավետությունը ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման գործում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հրատարակված հետևյալ աշխատանքներում՝

1. Խուգեյան Ա.Վ.Ավագ նախադպրոցական տարիքում համակարգչային խաղերին և պարապմունքներին ներկայացվող պահանջները «Նախաշավիղ» 5-6 Երևան 2005 թ., էջ 73-80
2. Խուգեյան Ա.Վ.Երկխոսության ուսուցումը նախադպրոցականի հաղորդակցման գործընթացում «Նախաշավիղ» 4-5 Երևան 2008 թ., էջ 77-85
3. Խուգեյան Ա.Վ.Երեխայի խոսքի զարգացման գիտատեսական վերլուծությունը «Նախադպրոցական կրթություն» «Մանկավարժական միտք» հանդեսի հավելված Երևան 2009թ.-1, էջ 62-67

4. Խուգեյան Ա.Վ.Մենախոսությունը որպես ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի դրսևորման ձև «Նախադպրոցական կրթություն» «Մանկավարժական միտք» հանդեսի հավելված Երևան 2009թ.-2, էջ 52-59
5. Խուգեյան Ա.Վ., Ղազարյան Ա.Մ. Նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման ստեղծագործական խնդիրների լուծման տեսություն տեխնոլոգիան Հանրապետական գիտաժողովի նյութեր՝ նվիրված Ժ.Ժ. Ռուսոյի 300 ամյակին. Վանաձոր, 2013, էջ 119-129
6. Խուգեյան Ա.Վ.Մոդելավորումը որպես նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման միջոց Հ.Թումանյանի ծննդյան 145 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2014, էջ 91-97
7. Хугеян А.В. Казарян А.М.Вклад отечественных ученых в развитии дошкольного образования Дошкольное образование: история и современность Сборник научных статей, Минск 2015, стр. 102-104
8. Хугеян А.В., Марутян С.А.,Особенности психолого-педагогической диагностики развития дошкольника: Կրթության որակի չափման, գնահատման հիմնախնդիրները միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, 274-278 էջ

ХУГЕЯН АРЕВИК ВАРДАНОВНА

РАЗВИТИЕ СВЯЗНОЙ РЕЧИ СТАРШЕГО ДОШКОЛЬНИКА В ПРОЦЕССЕ СОВМЕСТНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- "Теория и история педагогики"

Защита диссертации состоится 14-ого апреля 2016 года, в 12: 00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

АКТУАЛЬНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ. Развитие устной связной речи у ребенка – одна из важнейших задач дошкольной педагогики. Связная речь дошкольника считается высшей формой умственной деятельности, показателем уровня речевого и умственного развития.

Психологические механизмы усвоения детьми дошкольного возраста устной связной речи представлены в исследованиях выдающихся психологов 20-го века, таких как Л.С. Выготский, А.А. Леонтьев, С.Л. Рубинштейн,Л.А.Венгер. Методические основы развития устной связной речи в дошкольном возрасте освещены в работах Е.И. Тихеевой, Е.А. Флериной, А.М. Бородича, В.И. Ядешко, Ф.А. Сохина, В.В. Гербовой, О.С. Ушаковой и др. Во всех психолого-педагогических исследованиях старший дошкольный возраст рассматривается как переходный от ситуативной речи к контекстной, как период активной речевой деятельности, благоприятный для развития речи в комплексе. Проблеме развития речи, начиная с раннего детства посвящены научные исследования Ж. Пиаже.

Однако результаты, полученные в работе с детьми с совершенно другими языковыми особенностями, в условиях, не похожих на армяноязычное речевое пространство и среду общения, не могут быть использованы без опробирования. К сожалению, недостаточно изучены педагогические условия и методические нюансы усвоения детьми дошкольного возраста армянского языка, сложного как по структуре, так и по произношению. Сегодня, в нашей действительности все труднее найти дошкольника, способного говорить на родном языке свободно, грамотно и складно. Предварительные исследования показали, что дети-армяне дошкольного возраста имеют определенные сложности в процессе вступления в диалог, затрудняются в продолжении общего разговора, диалог детей, как правило, остается не завершенным. Старшие дошкольники умеют рассказывать истории, но не умеют слушать, не деляться впечатлениями, договариваются с трудом.

Актуальность исследования обусловлена необходимостью разработки таких методик развития устной связной речи у дошкольников, которые будут одновременно способствовать как развитию устной связной речи, так и формированию навыков общения в среде сверстников. Совместная деятельность детей как необходимость в формировании навыков общения может стать основой в разработке современной методики развития устной связной речи старших дошкольников.

ЦЕЛЬ ИССЛЕДОВАНИЯ. Выявить методические основы развития связной речи старших дошкольников в их совместной деятельности, обосновать педагогические условия их применения.

ЗАДАЧИ ИССЛЕДОВАНИЯ.

1. Исследовать проявления и степень развитости связной речи у старших дошкольников, выявить трудности общения.

2. Выявить содержание, критерии развитости и уровни развития связной речи старших дошкольников в совместной деятельности.

3. Разработать комплексные занятия, направленные на развитие связной речи старших дошкольников.

4. Разработать и экспериментально проверить продуктивность педагогических условий развития связной речи старших дошкольников в процессе их совместной деятельности.

НАУЧНАЯ НОВИЗНА ИССЛЕДОВАНИЯ.

- Выявлены особенности развития связной речи старших дошкольников.
- Уточнены проявления связной речи в следующих формах совместной деятельности: игровой, учебной, трудовой и изобразительной, а также уточнены проявления монологической речи в процессе описательного рассказа, пересказа и рассуждений.
- Разработана педагогическая модель, включающая развитие связной речи и совместную деятельность старших дошкольников с целью формирования навыков диалога и построения монолога в процессе игровой, учебной и трудовой деятельностей.
- Разработана, адаптирована и апробирована в технология развития связной речи ТРИЗ (теория решения изобретательских задач).
- Экспериментально обоснованы следующие педагогические условия развития связной речи старших дошкольников: развивающая предметная среда, комплексные занятия, игры и загадки с использованием ТРИЗ.

ТЕОРЕТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИССЛЕДОВАНИЯ.

- Разработаны теоретические основы формирования и развития связной речи старших дошкольников.
- Выявлены и теоретически обоснованы педагогические условия связной речи старших дошкольников в их совместной деятельности.
- Результаты исследования обогатят теоретические положения дошкольной педагогики.

ПРАКТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ.

1. Разработанная и экспериментально проверенная методика развития связной речи в совместной деятельности детей старшего дошкольного возраста может быть применена в педагогическом процессе современных дошкольных учреждений.

2. Апробированная система комплексных занятий, методы диагностики связной речи дошкольников, методические ориентиры могут быть полезны как педагогам ДОУ, так и студентам соответствующих факультетов педагогического ВУЗ-а.

АПРОБАЦИЯ ИССЛЕДОВАНИЯ.

Результаты исследования систематически докладывались на заседаниях кафедры дошкольной педагогики и методик АГПУ им. Х. Абовяна, на республиканских и международных конференциях. По проблеме диссертационного исследования опубликовано 8 статей .

СТРУКТУРА И ОБЪЕМ ДИССЕРТАЦИИ. Диссертационная работа изложена на 152 страницах компьютерного текста и состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений.

AREVIK V. KHUGEYAN

THE DEVELOPMENT OF SENIOR PRESCHOOLER' S COHERENT SPEECH DURING THE PROCESS OF CO-OPERATIVE ACTIVITY

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 "Theory and history of pedagogy".

The defence of the thesis will be held on the 14th of April, at 12: 00 p.m. at the session of 020 Specialized Council of Higher Attestation Commission, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Address: 0010, Yerevan, Tigran Mets 17.

SUMMERY

THE RELEVANCE OF THE RESEARCH. One of the most important problems in preschool pedagogy is the development of child' s oral coherent speech. Preschooler' s coherent speech is considered to be a higher form of mental activity, the index of the level of speech and mental development. The psychological mechanism of mastering the oral coherent speech by preschoolers is shown in the outstanding psychologists' researches of the 20th century such as L. S. Vigotski, A. A. Leontev, S. L. Rubinshtein. Methodical bases of the oral coherent speech development are elucidated in Y. E. Tikheeva' s, Y. A. Florina' s, A. M. Borodich' s, V. E. Yadeshko' s, F. A. Sokhin' s, V. V. Gerbova' s, O. S. Ushakova' s and others' scientific works. In all the psycho – pedagogical researches senior preschool age is considered as a transitional phase from situational to content speech, as a period for speech activity, favourable for speech development in complex. Speech problem, at an early childhood, is reflected in Piaget' s scientific research.

However, the results, received from the work of the children with other linguistic peculiarities, not similar to those of Armenian ones and communicative environment, can' t be used without being tested.

Unfortunately, pedagogical conditions and methodical nuances mastering by children speaking the Armenian language, which is very complicated both in structure and pronunciation, are not studied enough. Nowadays, in our reality, it is more difficult to meet a preschooler with the capacity of speaking the native language freely, grammatically, comfortably. Preliminary studies have shown that Armenian preschoolers have certain difficulties to start a dialogue, continue the talk, and their dialogue, as a rule, stays uncompleted. Senior preschoolers are able to tell stories, but they are not able to listen to each other, they don' t share their impressions and they also talk with difficulties.

The relevance of the research is connected with the necessity of working out such methods for preschoolers' oral coherent speech development, which will, meanwhile, promote both oral coherent speech and the formation of communicative skills among peers. Children' s co-operative activity, as a communicative skills' forming necessity, can become a basis for working out a modern methodology for senior preschoolers' oral coherent speech development.

THE AIM OF THE RESEARCH: To reveal the methodological bases of senior preschooler's coherent speech during co-operative activity, substantiate pedagogical conditions of their realization.

THE OBJECTIVES OF THE RESEARCH:

1. to study the manifestation of senior preschooler's coherent speech, level of the development, communicative difficulties.

2. To reveal the contents of senior preschoolers' coherent speech development during co-operative activity, difine the indices and levels of senior preschooler's coherent speech development.

3. To work out complex lessons directed to the development of senior preschoolers' coherent speech.

4. Work out and test the efficiency of the pedagogical conditions of coherent speech development during co-operative activity.

THE SCIENTIFIC NOVELTY OF THE RESEARCH:

- The peculiarities of senior preschooler's coherent speech development have been revealed.
- Not only forms of the coherent speech manifestation have been clearified during co-operative activity – game, educational, working, fine arts, but also forms of the monologue manifestation during narrations, retellings, descriptions and discussions.
- A model for senior preschooler's coherent speech development and co – operative activity has been worked out directed to the development of dealogue and monologue speech abilities.
- A technology of coherent speech development (TDCT) has been drafted and localized.
- Effective pedagogical conditions directed to senior preschooler's coherent speech development has been justified – developing objective environment, games, riddles.

THE THEORETICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH:

- Theoretical bases of the formation and development of senior preschooler's coherent speech have been worked out.
- Pedagogical conditions of senior preschoolers' coherent speech development have been revealed and theoretically justified.
- The results of the research will enrich the theoretical new theses of preschool pedagogy.

THE PRACTICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH:

Pedagogical conditions, means of coherent speech development, system of the drafted lesons with TSCT technology, diagnostic ways, methodical directions can effectively be used during pedagogical activity of preschool establishment, results of the research – during the educational activity of corresponding faculties of pedagogical higher establishments.

THE TESTING RESULTS OF THE RESEARCH:

The testing results of the research have been provided with modern pedagogical and psychological research and experimental works. The approprate methods included in the research are asserted with experimental data. The examination and investment of the main theotetical and practical recommendations have been implemented in Yerevan kindergartens number 126, 5, 43. 120 children have been included in the experimental work. The results have been discussed during the meetings at the chair of preschool pedagogy and methodology of ASPU after Kh. Abovyan, during methodical seminars and scientific conferances. The scientific research has been implemented during 2007 – 2011.

THE STRUCTURE AND VOLUME OF THE THESIS: The thesis consists of Introduction, three chapters, conclusion, bibliography and appendices. The volume of the thesis is 152 pages.